





դաշնակիցներին և նրանց հետ միասին  
հնագանդեցնել այն ցեղերին, որոնք միա-  
տեսակ թշնամի են թէ մեզ և թէ բէյին":  
Պատասխանելով այդ գրութեանը, բէյը բռ-  
ղոքում է Ֆրանսիայի գործադրելի միջոց-  
ների դէմ, հաւատացնելով, որ նա իր սե-  
փական ոյժերով կարող է խրումիրների կա-  
տարած մի քանի անկարգութիւնները ոչն-  
չացնել և միջոցներ գործադրել, որ նրանք  
այլևս չը կրկնվեն: Տօնմիսի կալուածների  
անկախութիւնը խախտելու դէմ բէյը բռ-  
ղոքում է, հիմնվելով իր և Բ. Դրան իրա-  
ւունքների վրա: Այդ պատճառով նա Ֆրան-  
սիայի առաջարկութիւնները հիմնաւոր չե-  
համարում են կարող նրանց ընդունել:

„Tempt“ ζωηρότερις, οπα μικρού θητείνισσερις ή απλωρήκελ θητείνισσερις ιδιαίτερη απογείωση στην κέντρη της

ԱՆԳԼԻԱ  
Նորերում հեռագիրը հաղորդեց լորդ  
Բիկոնսֆիլդի մահուան լուրը: Կրագիները  
նրա մասին հաղորդում են հետեւալլու  
Բիկոնսֆիլդ Անգլիայի պետական նշանաւոր  
գործիչներից մեկն էր և միեւնոյն ժամանակ  
հետեւում էր այն հին քաղաքավիտական  
արհեստին, որ հետզետէ կորցնում է  
իր նշանակութիւնը եւրօպական ժամանա-  
կակից ժողովուրդների կենքի մէջ: Վենի-  
ամին Դիզլայելիի անունը անբաժան կապ-  
ված է Անգլիայի պատմութեան հետ վեր-  
ջին 40 տարիների ընթացքում: Նրա կեն-  
տագրութիւնը զբելու համար պէտք է պատ-  
մել անգլիական նոր պատմութեան գլխա-  
ւոր անցքերը, որոնց նա որ և է կերպով  
մասնակցել է:

Դիզրայելի — Բիկոնսֆիլդի քաղաքական  
ասպարեզը շափագանց նշանաւոր է։ Աս  
ազգացուցանում է, որ անհատական տա-  
ղանդը և եռանդը հասարակական կեանքի  
ազատ զարգացման ժամանակ տալիս են  
այնպիսի հետեանքներ, որոնց ուրիշ պայ-  
մանների ժամանակ անկարելի է ստանալ։  
Եւրօպայի ամենազօրեղ և լուսաւորված  
որիստոկրատիան իր առաջնորդ ճանաչեց  
մի մարդու, որ գուշա էր եկել գրականա-  
կան համեստ Մըջանից Բրիտանական հպարտ  
օրդերը ենթարկվում էին մի զրոյի առաջ-

գական է, իսկ սրտով քրիստոնեայ է և գաղտնի բանակցութիւններ ունի ուսուաց թագաւորի հետ, կամնում է Վրաստանը դուրս բերել պարսից իշխանութիւնից և յանձնել ուսումնի մնութիւնը կամ անդը այժմ ասիսդման էր երկերեանի մեր խաղալ, մի կողմից պահպանել իր յարաւերութիւնները ուսումների հետ, միևն կողմից սրդարացնել իրան պարսից կառավարութեան առջև, թէ ինքը պարսից հաւատարիմ հապատակ է, թէ կոստանդինի հազորդածները բոլորը զըրգարտութիւն են, թէ նա դիսաւորութիւն ունի երկրին ևս տիրելու, այս պատճառով չարասօսութիւններ է տնում, և այլն։ Ուսուաց կաւալֆարութեանը ուղղած թղթերի վրա Վանանդը ստորագրում էր «Թագաւոր Վրաստավի», իսկ պարսից կառավարութեանը ուղղած թղթերը ստորագրում է «Վալի» \*) Պարսկաս-

Մինչ Վրաստանը այդ խոռվութիւնների մէջ  
ակնուվրա էր Անում, Սիւնեաց աշխարհում  
այսոց ապստամբները պատրաստվում էին, Էջ-  
ածնի Աստուածատուր կաթողիկոսը, որ գաղտ-  
ի ուժ էր տալի ապստամբութեանը, աշխա-  
տում էր կաղմել վրացիներից և հայերից մի-  
նդհանուր միութիւն, որ միասին կոռւեն պար-  
կիների դէմ: Բայց այդ նպատակին հասնելու  
ամար նախ պէտք էր, որ Վրաստանի մէջ երկ-  
տուակութիւնները գաղարէին, վրացիները մի-  
եանց հետ միանային, որ յետոյ կարելի Անէր  
այսացնել նրանց հայերի հետ միութիւնը: Այս  
ոքով հայսոց կաթողիկոսը անձամբ Վրաստան  
նաց, որ Վախթանգիին հաշտեցնէ Կախեթիայի  
լսան կոսաանդինի հետ: Բայց չը նայելով կա-

1017 Պալմերստօնի հակառակորդ էր |

# ԽԱՐԱ ՀԱԻՐԵՐ

Լօնգոնում այս օրերս բանտորների ժողովում  
ի յայտարարութիւն էր ձեռքից ձեռք անց  
ում. ահա նրա բովանդակութիւնը. — «300  
տասն ստերլինգ վարձատրութիւն նրան, ով կ  
երկայացնի սօցիալ—դեմոկրատների կլուքին  
խմարկի նամակի պատճենը դէպի կօմս Գրեն  
լլը, որտեղ Բիսմարկը հրաւիրում է անզիա  
ան կառավարութիւնը դատարանի միջնորդ հա  
ածել «Freiheit» լրագիրը:»

\* \* \*

Եւրօպայում սովորութիւն կայ տօնել արծա-  
եայ հարսանիքը, որ կատարվում է պատկից  
5 տարուց յիսոյ և ոսկէ հարսանիքը 50 տար-  
այ վերջը, բայց Ամերիկացիք աւելի հեռու են  
նում: Մէկ տարուց վերջը նրանք տօնում են  
սքարի հարսանիքը, երկու տարուց յիսոյ թըղ-  
է, հինգ տարուց յիսոյ փայտեայ, տաս տա-  
րուց երկաթեայ, քսան տարուց թիթեղեայ հար-  
սանիքը: Փայտեայ հարսանիքը տօնելիս ամու-  
հնաբերին բարեկամները պէտք է ընձայեն փայ-  
եայ կահկարասիք, խակ երր տօնվում է թզթէ-  
սրսանիքը բոլոր հիւրերը գալիս են թզթից  
եղեցիկ շինած գլխարկներով, խակ բերած ըն-  
աները բաղկանում են գրքերից, պատկերներից:  
թզթից շինած զանազան առարկաներից:

\* \* \*

Մի ամերիկական լրագրի մէջ տպված են մի  
ամի հետաքրքրիւ տեղեկութիւններ գեներալ  
արքիլդի, Ամերիկակի Միացեալ-Նահանգների  
ժմեան նախագահի մասին Մինչև 14 տար-  
այ հասակը Հարֆիլը աշխատում էր մի ճիւ-  
գործարանի մէջ, 16 տարեկան հասակում  
սույցում էր չոգենսափ վրա, 18 տարեկան հա-  
սկից Զէտուերի ակադեմիայում էր սովորում, 21  
տարեկան հասակում ժողովրդական ուսումնա-

ստաճառը, որ նա բաժանվեցաւ Վախթանգից  
ուանց իր դիտաւորութիւնը նրան յայտնելու,  
որ Նկատեց թէ վրացիների վրա յշտ դնելը ա-  
գուս էր:

Դաւիթ-բէկի հեռանալուց յետոյ Վրաստանը  
ստորիկ պատճվեցաւ: Պարսից կառավարութիւնը  
ատելու Վախթանգի համակրութիւնը դէպի  
ուսները, հրամայեց Կախեթիայի կառավարիչ  
ստանդինին տիրել Թիֆլիսը և հրաժարեցնել  
ախթանգին Լարթալմնիայի ջիշտանութիւնից:  
ստանդինը մի այսպիսի հրամանի Էր սպասում,  
իր վաղեմի բազծանքը լրագործէ և Թիֆ-  
լի իր ձեռքը գցէ: Նա միացաւ Ազգիների  
ու, եկաւ տիրեց Թիֆլիսը, նրան աւելակ գար-  
եց և մինչև անդամ կողոպանեց Սիօնի եկեղե-  
ւու:

Յիշլիսի առմանից յետոյ, Վախթանգը փա-  
ռու Խմերեթիալի կողմերը: Բարեսկրտ իշխանը  
նուհան շատ աշխատեց կրպին ձեռք բերել  
աստանի մայրաքաղաքը, և ուղարկերից յու-  
ցած օգնութիւնը չը գտնելով, իր եղբայր  
սէին ուղարկեց Ախալցխայի թիւրքաց խսակ  
շայի մօս և նրանից օգնութիւն խնդրեց: Բայց  
ւաճան Եասաէն, փոխանակ յօդուա իր եղբօր  
խստելու, առաջարկեց թիւրքերին իր ծառա-  
թիւնը, թէ կառաջնորդէ Արանց թիփլաը  
ուելու, միայն թէ իրան սցնանեղի կառավարիչ  
սնակէին: Այդ չարագործը, որ մի ժամանակ  
ըթալինիալի իշխանութիւնը ստանալու հա-  
ռ, պարսիկներին իր հպատակութիւնը առա-  
կելով, ընդունել էր Ալի կրօնը և կոչվում  
Ալլաղութիւն, — այժմ մի և նոյն իշխանու-  
նը ձեռք բերելու մաքով, և թիւրքերից օգ-  
թիւն գտնելու համար, ոնքունեան թուրան

բանի վարժապետ դարձաւ, 23 տարեկան մտաւ  
Ովկիլեամ—կօլեջ, իսկ 26 տարեկան հասակում  
փառաւոր կերպով հարցաքննութիւն տուեց  
և ստանալով գիտնական տիտղոս, ընդունեց Գի-  
րամի բարձրագոյն դպրոցի դասասուի պաշտօ-  
նը, 29 տարեկան հասակում Օհայօսի մէջ ստա-  
ցաւ սենատօրի օգնականի պաշտօնը, իսկ 31  
տարեկան դարձաւ բրիգագի գեներալ: Այդ պաշ-  
տօնի մէջ գտնված ժամանակ նա պատերազմում  
էր հարաւային նահանգների դէմ և մանաւանդ  
յայտնիցաւ իր քաջութեամբ Պիտարուրդի ճա-  
կասամարտի և Կօրինվի պաշարման ժամանակ.   
Մի տարուց յետոյ նա ստացաւ կումբերլանդի  
զօրքի գեներալ—շնաբի մեծաւորի պաշտօնը, 33  
տարեկան հասակում ընտրվեցաւ Միացեալ-Նա-  
հանգների օրէնսդրական ժողովի անդամ. 48  
տարեկան հասակում ստացաւ սենատօրի պաշ-  
տօն և կերչապէս 49 տարեկան հասակում ընտր-  
վեցաւ ամբողջ Միացեալ-Նահանգների նախա  
դահ:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Զ Գ Ո Յ Ց Ի Ե Ը Ն Կ Վ Ե Ր Ո Ւ Թ Ի Ե Ւ Ց Ա

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 ապրիլի: „Հովո  
Երեմյան լսել է, որ դատաստանը  
Տրիգոնիի և միւս պետական յանցաւողների  
մասին յունիս ամսից առաջ չի լինի: „Գո-  
լուսէ“ լրագիրը հաղորդում է, որ Մօսկ-  
վայի մէջ Զատկի շաբաթ զիշերը ցրված  
էին վրդովիցոցից բավանդակութեան ազ-  
գարարութիւններ: „Հարօնայ Յօլյա“ -ի  
ազգարարութիւնները դրված էին զատկի  
ձևուաների մէջ: Կայսերական հրացանաձիգ-  
ների հագուստի ձեւը կը մտցնի բոլոր գօր-  
քերի մէջ:

ՓԱՐԻԶ, 15 ապրիլի: Այսօր վախճանվեցաւ էմիլ գը-ժիրարդէն:

ԼԱԿԱԼԻ, 15 ապրիլի: Երէկ քրանչիացիները գրաւեցին Տօբորկա կղզին: Տունիացիները թողին այդ կղզին:

ԳՐԱՅ, 15 ապրիլի: Այսօր վախճանվեցաւ Փելդզէլյանէստեր բնենդէկ:

ԿԻԾՆԻԳՍԲԵՐԳ, 15 ապրիլի; Կալանաւոր-  
լած է ուսանող Յովսէփ Ֆենգեր, որովհե-  
տև դիտաւորութիւն էր յայտնել սպանել  
յայսը Վիլհելմին:

Կ. ՊՕՒԽՍ, 15 ապրիլին: Սուլթանի աներ  
բահմուդ-Դամադ-Փաշա կալանառքած է:  
Այս մեղադրվում է սուլթան Աբդուլ-Ազիզի  
պահանջմանը մասնակցելու և Մուրադի կա-  
տավարութեան ժամանակ բրիլիանաների  
խառնելու մէջ:

Խմբագիր—Հրասարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԵ

Եց Թիֆլիսը, և Կոստանդինին բռնելով, բան-  
տրկեց: Նրան ազատեց բանտից մէլիք Աշխա-  
տարը, \*) գիշերով Կուր գետի վրա նաւակի կանգ-  
եցնելով, և Կոստանդինին նրա մէջ իջեցնելով,  
հայրցեց: Դրա համար Խսակ-փաշան հրամայեց  
Նվիրին գլխատեցին:

Վրաստանը այժմ պարսիկների ձեռքից գուրս  
ալով, ընկաւ թիւրքերի իշխանութեան ներքոյ  
1724թ.), կառավարում էր Խսակ փաշան: Խսկ  
աւաճան Եսասէն իր նպատակին չը հասաւ, ո-  
վհետեւ օսմանցիք փոխանակ Թիֆլիսը նրան  
անձնելու, յանձնեցին Վախթանգի որդի Բա-  
րին: Այդ վերջինն էլ տեսնելով, որ պարսիկ-  
երի գարը անցաւ, ընդունեց թիւրքաց կրօնը,  
իր գլխին օսմանցոց չ ալ մայ փախթելով,  
ոչլեցաւ Իբրահիմ-փաշայ: — Ո՞հա այդ էր վրա-  
ց երեսակայական թագւորութիւնը: Նրա իշ-  
ամները պարսից տիրապետութեան ժամանակ՝  
արարից կրօնն էին ընդունեւմ և պարսից լսա-  
երի անուշով էին կոչվում, իսկ օսմանցոց տի-  
պահութեան ժամանակ՝ թիւրքաց կրօնն էին  
սդունում և թիւրքաց փաշաների անունով էին

Այդ բոլոր՝ զժքախտութիւններից յետոյ Վահի-  
անգը իր ընտանիքով և 1400 հոգով գնաց  
ուստատան։ Նա չը գտաւ Պիտրոս մեծին կեն-  
անի, նրան պատուով ընդունեց Եկատերինայ  
պարուհին։ Վերջը մեռաւ Պարսկաստանում, և  
սրբինը բերվելով թաղվեցաւ Հաշտարիսանում։

\*) «Վալի» կոչվում են որ և իցէ վիլայէթի կամ նահանգի կառավարիչները։ Խոկ պարսից վալիները աւատական իշխանների նշանակութիւն ունեին։

